

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

_____ Տ. Դավթյան

_____ Գ. Խաչատրյան

4 նոյեմբերի 2010 թ.

թիվ 733-Ն

29 հոկտեմբերի 2010 թ.

N 16

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

**«ՀԱՍՏՏՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 42-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 42-րդ հոդվածի համաձայն՝

1) վարսավիրանոց (գեղեցկության սրահ) է համարվում վարսավիրական ծառայության, դիմահարդարման, դեմքի մերսման, մատնահարդարման և (կամ) նման այլ ծառայության աշխատատեղի (աշխատատեղերի) համար առանձնացված մշտական կամ ժամանակավոր շինությունը:

2) վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղ է համարվում վարսավիրական ծառայության, դիմահարդարման, դեմքի մերսման, մատնահարդարման և (կամ) նման այլ ծառայության համար նախատեսված յուրաքանչյուր տեղը:

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» N 372-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչով վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայությունները դասակարգվում են 96.02 ծածկագրին: Այդ ծածկագրին իր մեջ ներառում է տղամարդկանց և կանանց մազերի լվացում, հարթեցում, կտրում, հարդարում, ներկում, գանգրացում, ուղղում և համանման ծառայություններ, սափրում և մորուքների հարթեցում, դեմքի մերսում, դիմահարդարում, ձեռնեղունգների ստածում, ոտների մատների հարդարում և այլն:

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի 96.04 ծածկագրի 96.04.2 ենթադասը՝ ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեությունը իր մեջ ներառում է՝ ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված այլ գործունեություն՝ արևաբուժարանների, հանքաջրաբուժական, քաշի նվազեցման և նիհարելու սրահների, մերսման կաբինետների (բացի բուժական մերսումից) և այլ ծառայություններ, իսկ բուժական մերսումը դասվում է 86.90 ծածկագրին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով *պաշտոնապես պարզաբանում եմ*.

Ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեությունը, այդ թվում մերսման կաբինետների գործունեությունը, վարսավիրական ծառայությունների մատուցում չի համարվում և այդ գործունեության մասով Օրենքի դրույթները կիրառելի չեն: